



Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Հանդիպում ՀՀ ոստիկանությունում

Հոկտեմբերի 15-ին ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Արման Սարգսյանն ընդունեց կալիֆոռնիայի նահանգային ասամբլեայի անդամ Արդին Նազարյանին, Լոս Անջելեսի քաղաքային խորհրդի անդամ Փոլ Քրիքոսյանին և աշխատակազմի ղեկավար Կարո Թորոսյանին:

Արման Սարգսյանը նշեց, որ ոստիկանության արդյունավետ աշխատանքի համար կարևոր է տեխնիկական հագեցվածությամբ, ինչպես և առաջավոր փորձի կիրառումը:

Քննարկման առարկա դարձան Հայաստանում ստեղծվելիք շարժական պարեկային ծառայության և այլ ստորաբաժանումների տեխնիկական հագեցվածության վերաբերյալ հարցեր: Այս համատեքստում հյուրերը համագործակցության և աջակցության պատրաստակամություն հայտնեցին:



Քը պայմանավորված է նախնառաջ ծառայողների մասնագիտական ունակություններով, համապատասխան ձևով հայտնեցին:

Հանդիպմանը բնարկվեցին նաև փոխադարձ հետաքրքրություններ կայացնող այլ հարցեր:

Մխրագործության մեղալի հետմահու

ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանի հրամանով՝ ծառայողական պարտականությունները կատարելիս կյանքին սպառնացող վրանգի պայմաններում ցուցաբերած անձնագոհության և մխրագործության համար ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Արաբկիրի պահպանության բաժնի ոստիկան, ոստիկանության ավագ Տիգրան Առաքելյանը հետմահու պարգևատրվել է «Մխրագործության համար» մեդալով:



ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի մեկ այլ հրամանով՝ ծառայողական պարտականությունները կատարելիս վիրավորված, նույն վաշտի ոստիկան, ոստիկանության կրտսեր սերժանտը պարգևատրվել է «Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանով:

Զինված միջադեպի հետքերով

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր և երեւան քաղաքի վարչությունների, Մալաթիայի բաժնի և այլ ստորաբաժանումների ծառայողների համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել է հոկտեմբերի 9-ին մայրաքաղաքում կատարված սպանությունը: Փաստական տվյալներով հիմնավորվել է, որ սպանությունը կատարել է երեւանի 23-ամյա բնակիչը:



Հիշեցնենք, որ հոկտեմբերի 9-ին երեւանի Անդրանիկ փողոցի 130 շենքի բակում զինված միջադեպ էր տեղի ունեցել, ինչի հետևանքով հրազենային վնասվածքով հիվանդանոց էր տեղափոխվել 29-ամյա մի երիտասարդ, որը մահացած էր: Դեպքի վայրում հայտնաբերվել էին հրազենի պարկուճներ և գնդակ:

Չարուցվել է քրեական գործ: Միջոցառումները շարունակվում են՝ հանցագործությունը կատարած անձին ու հրազենը հայտնաբերելու ուղղությամբ:

Չհասցրեց հատել պետական սահմանը

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության, Լոռու մարզային վարչության և Տարոնի բաժնի ծառայողները հոկտեմբերի 11-ին Բագրատաշենի սահմանային անցակետում հայտնաբերեցին Վանաձորի բնակիչ, 39-ամյա մի տղամարդու:



Կասկածյալը ներկայացվեց նախաքննությունը վարող քննչական մարմնին ու տվեց խոստովանական ցուցմունք, որ հոկտեմբերի 4-ին ինքն է Վանաձորի Միջուրի մի փողոցի տներից մեկի նկուղում ինքնաձիգով կրակել:

Բերման ենթարկվածին մեղադրանք է առաջադրվել: Նա կալանավորվել է և տեղափոխվել քրեակատարողական հիմնարկ:

Աշխատանքային խորհրդակցություն

Հոկտեմբերի 12-ին ոստիկանությունում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանը: Ներկա էին ոստիկանության պետի տեղակալ Հովհաննես Բոչարյանը, ճանապարհային ոստիկանության ղեկավարությունն ու անձնակազմը:

Քը պայմանավորված է նախնառաջ ծառայողների մասնագիտական ունակություններով, համապատասխան ձևով հայտնեցին:

Հիշեցնենք, որ կոռուպցիան և անտարբերությունը չպետք է տեղ գտնեն ճանապարհային ոստիկանության ծառայության մեջ: Լինելու դեպքում ստանալու են համարժեք կոշտ պատասխան:



Խոսվեց նաև ճանապարհային ոստիկանների ու ոստիկանության մյուս ստորաբաժանումների համագործակցության կարևորությունը մասին:

Ճանապարհային ոստիկաններին հանձնարարվեց անհանդուրժող լինել օրինախախտների նկատմամբ, առավել արդյունավետ ծառայություն իրականացնելու համար խաչմերուկներում կազմակերպել ծառայությունը ոչ միայն ֆիզսովորված ժամաքանակով, այլև՝ ըստ երբեք:

Ամփոփելով խորհրդակցությունը՝ Արման Սարգսյանը հույս հայտնեց, որ անձնակազմը կզիջողանա ոստիկանության ղեկավարության ներկայացրած պահանջները ու միասին կանեն ամեն ինչ՝ ապահով ու անվտանգ երթևեկություն ապահովելու ուղղությամբ:

Սպանության համար կասկածվողը ներկայացավ

Հոկտեմբերի 11-ի գիշերը հրազենային բազմաբեկոր վնասվածքներով հիվանդանոց տեղափոխվեց Գեղամիստ գյուղի բնակիչ, 31-ամյա մի տղամարդ, որը գիտակցության չզալով՝ մահացավ:



Ոստիկանության ծառայողները պարզեցին, որ դեպքը կատարվել էր Արարատի մարզի Գեղամիստ գյուղում: Հանցագործության բացահայտման աշխատանքներն իրականացրին ոստիկանության երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի և Արարատի մարզային վարչության ու Մասիսի բաժնի ծառայողները: Փաստական տվյալներ ձեռք բերվեցին, որ Գեղամիստ գյուղի Կենտրոնական փողոցում 31-ամյա տղամարդու ուղղությամբ որսորդական հրացանով կրակել էր 34-ամյա համագյուղացին: Դեպքի վայրում հայտնաբերվեցին արմատները ու պարկուճներ:

Սպանության համար կասկածվող անձին հայտնաբերելու միջոցառումներին զուգահեռ իրականացվեց բացատրական աշխատանք: Արդյունքում կասկածվողը եկավ ոստիկանության Մասիսի բաժնի ներկայացնելով նաև հանցագործության գործիք որսորդական հրացանը:

Կատարվում է նախաքննությունը կատարելու համար կասկածվող անձին հայտնաբերելու միջոցառումներին զուգահեռ իրականացվեց բացատրական աշխատանք: Արդյունքում կասկածվողը եկավ ոստիկանության Մասիսի բաժնի ներկայացնելով նաև հանցագործության գործիք որսորդական հրացանը:

Բացահայտվել են ապօրինություններ

Ոստիկանության ԿԳՊՊ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ երեւանի Շենգավիթ վարչական շրջանի նախկին ղեկավարը համայնքապետարանի աշխատակիցների միջոցով վարչական շրջանի տարբեր տնտեսավարող, ինչպես և ռուսաստանաբնակ անձանցից հավաքագրել է 9900 դոլարին համարժեք 4 միլիոն 752 հազար դրամ 2016 թ. ապրիլյան պատերազմի մասնակիցներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու պատրվակով: Ըստ քննությանը հայտնի տվյալների՝ նա հիշյալ ֆինանսական միջոցներով մտերիմների օգնությամբ ձեռք է բերել և Ռուսաստանից Հայաստան տեղափոխել «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենաներ, որոնցից մեկը նվիրաբերել է Շենգավիթ վարչական շրջանի ԵՎՄ տարածքային կազմակերպության նախագահին, իսկ մյուսը հաշվառելով իր վարորդի անվամբ՝ հափշտակել է:



Չարուցվել է քրեական գործ:

Համակարգ

Չարաշահումներ են արձանագրվել

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության ծառայողները նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերել, որ Գավառ համայնքի ղեկավարը եւ տեղակալը 2018 թ. մարտ-մայիս ամիսներին առանց փաստաթղթային ձեռնարկման թույլատրել են մասնավոր շինանյութի առևտրով զբաղվող իրենց մտերիմին ապամոնտաժել Գավառի Ազատության 2-րդ փողոցի մանկապարտեզի շենքը եւ տնօրինել ապամոնտաժման արդյունքում գոյացած, այս պահին քննությանը հայտնի տվյալներով 3 միլիոն 500 հազար դրամ շուկայական արժեքով իրացված շինանյութը: Ապօրինի գործարքը ընդարկելու նպատակով նրանք 2018 թ. ապրիլի 20-ին կազմակերպել են ապամոնտաժման թույլտվության վերաբերյալ ձեռնարկման փուլի արձանագրում: Նիստ, որին հաջորդել է սահմանափակ պատասխան



նատվությամբ մի ընկերության կողմից տվյալ գույքի շուկայական արժեքին եւ ապամոնտաժման աշխատանքներին գրեթե համարժեք՝ շուրջ 2 միլիոն 200 հազար դրամի չափով գնահատելու գործընթացը: Դրա հիման վրա տվյալ աշխատանքների կատարման վերաբերյալ 2018 թ. հունիսի 13-ին մեկ այլ ընկերության հետ ձեռնարկման փուլի կապալի պայմանագիր է կնքվել, ինչի հետեւանքով համայնքի օրինական շահերին պատճառվել է եական վնաս:

Պարզվել է նաեւ, որ Գավառի համայնքի ղեկավարը 2016 թ. մարտին, 2017 թ. հուլիսին, 2018 թ. ապրիլին կազմակերպել է համայնքապետարանի եւ իր հորը պատկանող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջեւ համայնքին տրանսպորտային ծառայություններ մատուցելու մասին պայմանագրերի կնքում, որոնց շրջանակներում Գավառի համայնքապետարանի աշխատակազմի իրավատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետը փաստացի մատուցված ծառայությունների ծավալների վերաբերյալ հավելագրումներ կատարելու եւ ակնհայտ կեղծ տվյալներ մատուցելու եղանակով կազմել է հանձնման-ընդունման կեղծ ակտեր: Համայնքի ղեկավարը հաստատել է ակտերը, որոնց հիման վրա էլ համայնքապետարանի ֆինանսական միջոցներից ելքագրվել են վատնվել է, այս պահին քննությանը հայտնի տվյալներով, հիշյալ ընկերությանը փոխանցված 3 միլիոն 800 հազար դրամ:

Հարուցվել է քրեական գործ:

Չհասցրեց հատել պետական սահմանը

Սկիզբը էջ 1

Չիշեցնենք, որ հոկտեմբերի 4-ին, կեսգիշերին մոտ, Վ ա ն ա ծ ո թ ի Միջուրիների փողոցի քրեական մեկից հրագեւային վնասվածքներով հիվանդանոց էին տեղափոխվել վեց երիտասարդ: Նրանցից մեկը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել էր: Դեպքի վայր մեկնած ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները փան նկողային հարկում հայտնաբերել էին 30-ամյա երկու փղամարդու դի՝ դարձյալ հրագեւային վնասվածքներով:



Քրեական գործ էր հարուցվել: Տարրերի բաժնի քրեական հետախույզները բաժին բերման էին ենթարկել Վանաձորի բնակիչ, 46-ամյա մի փղամարդու, որը ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող մարմնին: Օպերատիվ-հետախույզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում փաստական փյույվներ ձեռք բերվեցին զինված միջադեպի հանցանքների վերաբերյալ, որոնց հիման վրա ձերբակալված փղամարդուն մեղադրանք առաջարկվեց:

Օպերատիվ-քննչական միջոցառումները շարունակվում են:


Մարտին ՄԻՄՈՆՅԱՆ

Խախտումներ ջրօգտագործողների ընկերությունում

Ոստիկանության ԿԳԴՊ գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ «Շիրակ» ջրօգտագործողների ընկերության տնօրինությունը 2017-2019 թթ. ջրամատակարարման ծառայություններ մատուցելիս մի շարք խախտումներ է թույլ տվել:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ «Շիրակ» ջրօգտագործողների ընկերության տնօրինությունը խախտումներ է թույլ տվել՝ օգտվելով էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի իրավասու պաշտոնատար անձանց պարտականությունների անբարեխիղճ եւ ոչ պատշաճ կատարելուց առաջացած հնարավորությունից: Ըստ քննությանը այս պահին հայտնի տվյալների՝ ընկերության տնօրինությունն անձանք եւ այլ աշխատակիցների ներգրավելով՝ 2017-2019 թթ. ընթացքում չի կատարել բաժանորդների հետ կնքված ջրամատակարարման ծառայություններ մատուցելու պայմանագրի պահանջները, չի տեղադրել չափիչ-հաշվառող սարքեր՝ բաժանորդներին զրկելով մատակարարող ոռոգման ջրի ծավալները հսկելու հնարավորությունից:

Անձնական կամ այլ շահագրգռվածությունից ելնելով՝ պաշտոնատար անձինք թաքցրել են ջրամատակարարման ընթացքում առաջացած 70% ջրի իրական կորստի ծավալների մի մասը՝




հրամք հավելագրելով ջրօգտագործողների տուրքերին, իսկ տվյալները ներառել էլեկտրոնային մատյաններում: Այս պահին հայտնի տվյալներով՝ փաստացի ուռնացված ծառայությունների դիմաց բաժանորդներից հավաքագրել են 26 միլիոն դրամից ավելի գումար, իսկ պետությունից ստացել՝ 31 միլիոն դրամից ավելի սուբսիդավորման գումար:

Պարզվել է նաեւ, որ «Շիրակ» ջրօգտագործողների ընկերության տնօրենը, հաստատապես իմանալով ընկերությունում որպես պոմպավոր գրանցված յոթ աշխատակիցների աշխատանքի չներկայանալու մասին, հաստատել է փաստացի աշխատած ժամանակահատվածի կեղծ տեղեկագրեր՝ դրանք ներկայացնելով վճարման: Այդպիսով՝ վատնման եղանակով հափշտակվել է մոտ 1,5 միլիոն դրամ:

Հարուցվել է քրեական գործ: Երիկ ԱՍՏՎԱԾՍՏՅԱՆ

Ոստիկանները բացահայտեցին դառնակահարությունը

Հոկտեմբերի 3-ի գիշերը ոստիկանության Շենգավիթի բաժնում հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ կտրած-ծակած վերքերով բուժօգնության է դիմել 41-ամյա մի տղամարդ:



Տուժողը սկզբում ի վճակի չէր եղել բացատրություն տալու, իսկ ավելի ուշ թաքցրել էր դեպքի իրական հանգամանքները՝ հայտնելով՝ իբր 1-ին մասում վիճել է անձանք մեկի հետ, նա էլ դառնակահարել է:

Քրեական հետախույզները պարզեցին, որ դեպքը կատարվել է ոչ թե Առաջին մասում, այլ Ներքին Շենգավիթի 5-

րդ փողոցում: Ըստ ձեռք բերված նախնական տվյալների՝ անձնական հարցերի շուրջ վիճարկման ժամանակ տուժողին մարմնական վնասվածք էր պատճառել նրա ծանոթը՝ Ներքին Շենգավիթի 7-րդ փողոցի 60-ամյա մի բնակիչ: Դեպքի վայրից ոչ հեռու ոստիկանները հայտնաբերեցին հանցագործության գործիք դանակը:

Բացատրական աշխատանքների արդյունքում կասկածվողը ներկայացավ ոստիկանության Շենգավիթի բաժնի:

Հարուցվել է քրեական գործ: Գոռ ՎԱՆՅԱՆ

Քսանից ավելի գողություն էր արել

Հոկտեմբերի 5-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնի քրեական հետախույզները, օպերատիվ տվյալներն իրացնելով, հաջիկ Դաշտենցի փողոցից բերման ենթարկեցին Ջերմուկի 44-ամյա մի բնակիչ: Նրա նկատմամբ հայտարարվել էր հետախույզում գողության մեղադրանքով: Խափանման միջոցը՝ կալանք:



44-ամյա տղամարդը խոստովանել է, որ Երեւանի տարբեր վարչական շրջաններում, հիմնականում պատուհանները հարմարեցված գործիքով բացելու միջոցով, տասնինը բնակարանային գողություն է արել, նույն եղանակով եւս չորս բնակարանային գողություն էլ արել էր մարզերում:

Նախաքննությունը շարունակվում է:

Զոհվեց ծառայողական պարտականությունները կատարելիս



Ծառայողական պարտականությունները կատարելիս զոհվեց ոստիկանության ավագ Տիգրան Առաքելյանը:

Տիգրան Առաքելյանը ոստիկանության համակարգում էր 2002 թվականից: Ծառայում էր ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Արաբկիրի պահպանության բաժնում:

Տիգրան Առաքելյանը զոհվեց ծառայողական պարտականությունները կատարելիս՝ հոկտեմբերի 16-ի գիշերը:

Ոստիկանի ծառայությունը միշտ կարող է վերածվել վտանգավոր պայքարի: Ոստիկանի ծառայությունը ցանկացած պահի կարող է վերածվել խիզախումի: Այդպիսին է ոստիկանի ծառայությունը՝ կանգնել հանցագործին դեմ հանդիման: Կանգնել իր մարդասիրական մասնագիտության պահանջով: Հաճախ նաեւ իր կյանքի գնով...

Տիգրան Առաքելյանը 38 տարեկան էր, խնամքին երկու զավակ ուներ ու բազում երագանքներ, որոնք անկատար մնացին...

Ցավակցում ենք ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված մեր գործընկերոջ ընտանիքի անդամներին, կիսում կորստյան անանց ցավը:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Փախցրած «ԳԱԶԵԼ»-ով վթարի էր ենթարկվել



Հոկտեմբերի 7-ին ոստիկանության Կոտայքի բաժնում հաղորդում ստացվեց, որ Արզնի գյուղում փախցրել են «ԳԱԶԵԼ» մակնիշի ավտոմեքենա: Ահազանգից որոշ ժամանակ անց Կոտայքի ոստիկանները առեւանգված մեքենան հայտնաբերեցին Արովյան քաղաքի շենքերից մեկի բակում: Մեքենան փախցրած անձը վթարի էր ենթարկվել եւ թողնելով մեքենան՝ հեռացել էր: Նրան հայտնաբերելու միջոցառումների ընթացքում բաժնում եւս մեկ ահազանգ հնչեց: Հայտնում էին, որ Բալահովիտ գյուղի 2-րդ փողոցի տներից մեկը գող է մտել: Ոստիկանության Կոտայքի բաժնի եւ Բյուրեղավանի բաժանմունքի օպերատիվ խմբերը շտապեցին Բալահովիտ: Արագ արձագանքման շնորհիվ ոստիկանները ահազանգողի հայտնած հասցեում բռնեցին Երեւանի բնակիչ, 26-ամյա երիտասարդին ու կասկածանքով բերման ենթարկեցին բաժնի: Հետագա միջոցառումներով պարզվեց, որ նա է «ԳԱԶԵԼ»-ը փախցրել: Կատարվում է քննություն:

Մ. Ա.

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Մարդկային հարաբերությունների խաթարման, մարդկանց հոգեկերտվածքի ձեւախեղման իրողությունը մտահոգիչ է. ամեն օր հանցագործությունների ակաւատես են դառնում, անհոգի, անպատասխանատու, ագրեսիվ մարդիկ եղանակ են ստեղծում, մարդկային հարաբերությունների որակ փոխում, ոտնահարվում են համակեցության կանոնները: Այս ամենը անշուշտ սոցիոլոգների և հոգեբանների համալիր վերլուծության, ապա եւ՝ համապատասխան իրավասուների միջամտության կարիքն ունի: Մեր խնդիրը երեւոյթի մասին բարձրաձայնելն է, մտահոգությունը, որ ցավալի իրողությունը կենսակերպ չդառնա, իրական արժեքները հասարակական կյանքում վերգտնեն իրենց կարեւորությունը, մարդկային հարաբերություններում օրինաչափ տարակարծությունները չփոխվեն հանցագործության: Այս խնդիրների ու մտահոգությունների շուրջ է մեր գրույցը հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դրանտ Ավանեսյանի հետ:

- Դոգեբանի տեսանկյունից՝ ի՞նչ գործոններ են նպաստել նման իրավիճակի ստեղծմանը:

- Դիմախնդիրը տարբեր տեսանկյուններից դիտարկելու անհրաժեշտություն ունի: Նախ՝ սոցիալ-հոգեբանական, նաեւ՝ սոցիալական տեսանկյունից, երկրորդ՝ անձի՝ անհատի տեսանկյունից, այսինքն՝ յուրաքանչյուր անձի կենսագրությամբ, ապրելակերպով, դաստիարակությամբ պիտի դիտարկել հիմնախնդիրը: Այս երկրորդն առավել ընդգրկուն է. օրինակ, ինչպիսի՞ ընտանիքում է մեծացել, դաստիարակվել տվյալ անձը, ի՞նչ հայացքների տեր է եւ արժեքային ի՞նչ համակարգով է կողմնորոշվում:

Դժգոհող կրթական մակարդակն է: Թվարկված գործոններն այսօր բավական խաթարված վիճակում են, ինչն էլ իր հերթին հանգեցնում է ագրեսիվության:

- Որպես հոգեբան, ունե՞ք դեղատոմս, ինչ կբերի մարդկային հարաբերություններում ագրեսիվության, անհանդուրժողականության նվազման:

- Որպես գիտնական՝ իրավիճակը պետք է ոչ թե պարզապես վատ, խնդրահարույց գնահատեմ, այլ վերլուծեմ, հասկանամ պատճառները, ինչը պետք է փնտրել նախորդող ժամանակաշրջանում: Երկրաշարժ, պատերազմ, համակարգի փոփոխություն, քաղաքական տատանումներ՝ սրանք բերեցին թվարկված գործոնների փոփոխության, խեղաթյուրման, կենտրոնացան անձի հոգեբանության վրա:

Որտեղից եմ եկել, ով եմ այսօր, ինչ է սպասում ինձ վաղը՝ անձի կայունության հիմնական բանաձեւն է. եթե մարդու մեջ այս երեք բաղադրիչները հավասարակշռված են, ապա նա բնականոն հոգեվիճակում է, իսկ եթե դրանք խաթարված են, հետեւում է անհավասարակշիռ հոգեվիճակ՝ մարդը դառնում է թերահավատ, ապակողմնորոշված, ընկնում է դեպրեսիվ վիճակի մեջ, դառնում դյուրագրգիռ, բացասական ազդակներին արագ արձագանքող:

- Մենք սոցիալ-քաղաքական մի վիճակից մի այլ իրավիճակի անցումը հաղթահարեցինք, եթե, իհարկե, հաղթահարել ենք, տեսական ժամանակահատվածում: Դոգեբանական տեսանկյունից՝ ինչպե՞ս կբացատրեք անցում երեւոյթն ընդհանրապես:

- Դա չափազանց լուրջ է նուրբ գործընթաց է, որովհետեւ ցանկացած անցում հոգեբանական ճգնաժամ է, եւ մարդը այդ շրջանում կարող է դառնալ գրգռվող, լարված, աղապտացիայի խնդիրը դժվար հաղթահարելու պատճառով՝ ագրեսիվ, կռվարար:

Մեր երկրում սոցիալ-քաղաքական մի վիճակից մյուսին անցումը խիստ տեսական եղավ, եւ հասարակությունը հայտնվեց հոգեբանական ճգնաժամի մեջ, ինչն էլ այսօրվա իրավիճակի բացատրություններից մեկն է:

- Ուզում եք ասել՝ այդ տեսական գործընթացում փոխվեցին, ավելի ճիշտ՝ ձեւախեղվեցին մի շարք արժեքներ, ինչի արդյունքում էլ ունենք այն՝ ինչ ունենք:

- Այո: Օրինակ, կրթական համակարգը: Ի՞նչ է տեղի ունեցել: Դժգոհությունը այսօրվա եւ խորհրդային ժամանակաշրջանի մանկավարժի կարգավիճակը. այն ժամանակ մանկավարժը դիտվում էր որպես բավարկողմանի զարգացած, հասարակությանը պիտանի մարդ. մանկավարժու-

տեւ կենցաղային բարեկեցությունը երկրորդ դեպքում ավելի հեշտ է ապահովել: Մի դիտարկում անեմ: Դեռուստատեսությամբ ցուցադրվող մի հաղորդում կա. այցելում են այս կամ այն երգչի, շուրջփոխակներ կայացուցչի տուն: Երբեւէ տեսել եք, որ հարուստ կահավորված այդ տներում գրապահարան ցուցադրվի կամ տան որեւէ անկյունում գիրք լինի: Զկա՛, չե՞ք տեսել: Գուցե այդ մարդն ունի հարուստ գրապահարան, բայց լրագրողը դա կարեւոր, ցուցադրելու արժանի չի համարում: Եվ ամենակարեւորը՝ նման հաղորդումների հեղինակները համարում են, որ մանկավարժի, գիտնականի տուն այցելությունն անհետաքրքիր է, կարծում են, թե մեր հասարակությունը «ծարավի» է անմակարդակ,

«Ժամանակակից» մտահոգություններ

թյունն ու հասարակությունը գիտեին իրենց իրավունքներն ու պարտականությունները միմյանց նկատմամբ եւ հստակ իրագործում էին դրանք: Մանկավարժը հեղինակություն էր դարձրոցականի, ընդհանրապես հասարակության աչքում: Պետությունը մանկավարժությունից հստակ պահանջներ ուներ, իսկ մանկավարժությունը՝ սերնդից: Զեմ ուզում այսօրվա մանկավարժներին նեղացնել, բայց պիտի ասեմ, որ նրանք որոշ իմաստով ապակողմնորոշված են, իրենց գործի հանդեպ չունեն այն վստահությունը, ինչ ուներ նախկին մանկավարժը:

Պարզեցնեմ ասելիքս. այսօր մանկավարժը կաշկանդված է սոցիալական բազում խնդիրներով, կենցաղային հիմնահարցերով, ուրեմն որքան էլ գեղեցիկ խոսքեր ասի, կոչեր անի, որքան էլ ջանասիրություն ցուցաբերի, վստահություն չի ներշնչի աշակերտներին, որովհետեւ անձամբ վստահ չէ իր գործում, սոցիալական առօրյայում, կենցաղում:

- Այսինքն, նոր սերունդը իրականության մեջ այլ օրինակներ ունի, որովհետեւ նախընտրելի է ըստ պահանջի ապրել, բան համեստ աշխատավարձով կենցաղային հարցերը մի կերպ լուծող մտավորական լինելը: Ուրեմն՝ ի՞նչ, երիտասարդությունը իդեալները փոխելու խնդիր ունի:

- Ուսանողների հետ գրույցների ժամանակ հաճախ եմ ցավալի երեւոյթի հանդիպում. շատերը թերահավատ են իրենց ընտրած մասնագիտության կարեւորության, հասարակության մեջ իրենց վարվա դերի հանդեպ: Կյանքի մասին իդեալական պատկերացումները, նպատակներին շուտափույթ հասնելու ձգտումը, մաքսիմալիզմը, որ հատուկ է երիտասարդությանը, խանգարում են իրատես լինել. նրանք կամենում են անհապաղ իրականացած տեսնել իրենց պատկերացրած մոդելը եւ հիասթափության, հուսահատության են մատնվում՝ իզուր համարելով ստացած փոփոխությունն ու կրթությունը:

Երիտասարդների մղումների մեջ մյուս կարեւոր խնդիրը արժեքային համակարգն է: Ճիշտ եք ասում՝ ոմանք մտածում են, որ առավել կարեւոր է գլխում խելք ունենալու փոխարեն գրպանում փող ունենալ, որովհե-

բան ինտելեկտուալ խոսքի:

Սիւս նաեւ այսպիսի բաներով է արժեքային համակարգը ստեղծվում: Այնինչ, պետք է նախառաջ մեծարվեն գիտնականն ու գրողը, ճարտարապետն ու մանկավարժը: Այո՛, իդեալները պետք է փոխվեն,

սերունդը կեղծ արժեքային համակարգով չպետք է դաստիարակվի: Մեր հեռուստաընկերությունները, մանավանդ նրանք, որոնք պետական ֆինանսավորում ունեն, պետք է հոգեբան-խորհրդատու, հոգեբան-վերլուծող ունենան, ինչպես, օրինակ, ռուսական հեռուստաընկերությունները: Այդ մասնագետները պիտի հաղորդման ենթատեքստը տեսնեն՝ ի՞նչ ազդեցություն կունենա այն անչափահասների, երիտասարդության վրա: Մեզ մոտ նման բան չի արվում, եւ ես, որպես հոգեբան, դիտելով այդ հաղորդումները, միանշանակ այն տեսակետին եմ, որ հեռուստատեսությամբ ցուցադրվող պարզունակ, անմակարդակ, միաժամանակ՝ ագրեսիվ հաղորդումներն ու սերիալները պարզապես վնասում են հասարակությանը, խեղաթյուրում են երիտասարդների պատկերացումները:

- Խոսենք ագրեսիայից: Քրեածին իրավիճակը հիմնականում ագրեսիայի, հասարակության ներստիզացված լինելու հետևանք է. ագրեսիան դարձել է հարցեր լուծելու եղանակ...

- Ագրեսիվությունն ընդհանրապես բնորոշ է մարդուն, բայց եթե մարդը բարոյապես հասուն է, առաջնորդվում է իրական արժեքներով, ապա խնդիրները վերացնելիս չի դիմի ագրեսիայի: Իսկ եթե մարդու մեջ ձեւավորված չեն մարդասիրության, կրթության, բարոյացանկության, խոհեմության նորմերը, ապա նա ընդունակ է միայն ագրեսիայի: Սիւս այստեղ են կարեւորվում վերը նշված հանգամանքները:

Ես երիտասարդների հետ եմ անջվում. նրանց մեջ կան բանիմաց, կիրթ, նպատակասլաց, հետեւողական ու կամային երիտասարդներ, բայց միջին թվաքանականով մյուս տեսակը, որն առաջնորդվում է կեղծ կատեգորիաներով, որն անխոհեմ է, իր «ես»-ի մասին չափազանցված պատկերացումներ ունի ու պատրաստակամ է հարցերն ուժով լուծելուն, ավելի մեծ թիվ է

կազմում:

Մեր ժողովուրդը իրավունք չունի բարձրագույն արժեքներով չառաջնորդվելու: Մեր պետական մտածողությունը չպետք է բթանա, պարտավոր ենք արժեքային համակարգով առաջնորդվել, եւ դրանում պետք է բոլորն իրենց ներդրումն ունենան: Դատկապես ծնողները, որոնք ոչ միայն պիտի հոգան իրենց զավակների կուշտ լինելու հարցը, այլեւ մտածեն նրանց հոգեպես առողջ ձեւավորման մասին. դա ընտանեկան դաստիարակության ամենակարեւոր խնդիրն է: Այսօրվա չափահաս հանցագործը երեկվա՝ ընտանեկան դաստիարակություն չստացած անչափահասն է:

- Վերջին շրջանի քրեական իրավիճակի վերլուծությունը փաստում է, որ ավելացել են ընտանեկան բռնությունները: Դոգեբանական ճգնաժամի հետեւանք են:

- Այդ դեպքերը գլխավորապես տեսական ժամանակ ձեւավորված հոգեվիճակի արդյունք են: Տարբեր գործոնների հետեւանքով տարիներ շարունակ կուտակված խնդիրների, տագնապային վիճակների, փոխադարձ անբարյացակամության եւ անհանդուրժողականության պատճառով են սպանությամբ ավարտվում այդ դեպքերը: Դրանց հիմքում ոչ թե սոցիալական, այլ հոգեբանական խնդիր է. սոցիալականը պարզապես արագացնում է դեպքերի դրամատիկ ավարտը: Սոցիալական վիճակը կարող է դրդել, ասենք՝ գողության, կողոպուտի, բայց՝ ոչ սպանության:

- Դանցագործության աճին նպաստող հանգամանք է համակեցության կանոնները չպահպանելը: Այս առնչությամբ ձեր՝ հոգեբանի դիտարկումները...

- Դամակեցություն կանոնները չպահպանելու մեջ, ցավոք, նաեւ ազգային մենթալիտետի խնդիր կա. թվում է՝ չենք կարող փողոցը ճիշտ տեղում հատել, մեքենան մյուսների համար հարմար դիրքով կանգնեցնել, ավտոտնակ կամ որեւէ շինություն կառուցելիս հաշվի առնել հարեւանների շահերը եւ այլն: Օրինակներ շատ կարելի է բերել, երբ հանրային կյանքի կառավարումը իրականացվում է ոչ թե օրենքով, այլ անձնային հարաբերություններով:

Դասարակության հոգեբանական առողջությունը պայմանավորված է մի շարք գործոններով, եւ դրանցում լուծելիք խնդիր ունեն բոլորը՝ պետական կառույցները, մանկավարժները, ձեռնարկությունների ղեկավարները...

Դոգեկան առողջության ապահովման կարեւոր պայմաններից մեկը հոգեբանական ծառայությունների ներմուծումն է տարբեր ոլորտներ: Նաեւ՝ սոցիոլոգիական ճշգրիտ հետազոտությունների հիման վրա կատարվող վերլուծություններն են, որոնք վեր կհանեն պատճառներն ու կգտնեն ճիշտ լուծումներ:

Դժգոհող կարեւոր պայմանը հոգեբանական փորձաքննությունն է. փորձաքննության պիտի ենթարկվեն, օրինակ, դասագրքերը, հեռուստատեսային հաղորդումները եւ այլն: Սրանք կանխարգելիչ գործոններ են, որոնք ուղղված են հասարակության առողջացմանը:

Իսկ ընդհանրապես, ես լավատես եմ. ամեն օր շփվում եմ երիտասարդության մի ստվար խմբի հետ, որը պատրաստ է ծառայել հասարակությանը, պետությանը, ջանադրաբար ուզում է մեր երկիրը դարձնել օրինակելի:

Իրականության մեջ, իհարկե, ցավալի կողմեր շատ կան, խնդիրները շատ են, բայց հուսահատվել պետք չէ: Լուծման բանալին խնդիրները ճիշտ վերլուծելն ու հաղթահարելը, արժեքները վերագնահատելն ու արժեքային ճիշտ համակարգով առաջնորդվելն է:

Դարցագրույցը՝ ԴԱՄԻԿ ՊՈՊՈՍՅԱՆԻ

«02»-ի օպերատիվ իրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Գեղարքունիքի մարզի Աստղաձոր գյուղում հարեանություններ ապրող երկու ընտանիքների հարաբերությունները շեղմ էին: Հարեանուհիներ Ալվարդը և Անահիտը սուրճի սեղանի շուրջ հաճախ էին կիսվում իրենց խնդիրներով: Հարկ եղած դեպքում՝ նաև իրար օգնում էին: Սրանց հողամասերի միջև ընկած ընդհանուր ճանապարհը մեքենաների համար դժվարանցանելի էր դարձել շինանյութի առկայության պատճառով: Անահիտի ամուսինը շինություն էր կառուցում, և մեքենաները անցնելիս հատում էին հարեանի հողամասի սահմանը:

Ալվարդը մի քանի անգամ իր դժգոհությունը հայտնեց Անահիտին: Նա էլ խոստանում էր ճանապարհի խոչընդոտը վերացնել: Հարեանու-

հիները գրույցի եւ մի թեմա ունենին, ինչից Ալվարդը հնարավորինս խուսափում էր. ընտանեկան բյուջեի միջոցով

Հարեանուհիները



կենտրոնական ճանապարհից էլեկտրաէներգիա ու ջրատար խողովակ էին անցկացրել, ինչից ցանկանում էին օգտվել նաև դրացիները: Սակայն Ալվարդը մերժում էր Անահի-

տին՝ փոխելով գրույցի թեման: Չէ՞ որ իրենք փող էին ծախսել և բարի կամք դրսևորելու ցանկություն չունենին. նույնիսկ ծախսված գումարի մի մասը փոխատուցելը Անահիտի սրտով չէր:

Սեպտեմբերի 21-ին դարձյալ խոսեցին ճանապարհին լցված բարերի ու ավազի մասին: Զրույցը աստիճանաբար վերածվեց լեզվակռվի, ապա վեճի: Անահիտը նաև ակնարկում էր ջրատար խողովակից և էլեկտրաէներգիայից օգտվելու՝ Ալվարդի մերժումները: Մի խոսքով, վեճի ընթացքում Անահիտը խփեց Ալվարդին ու նրա մորը՝ Գրետային:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Մարտունու բաժնի աշխատակիցները: Հարեանուհիների հաշտության հիմքով բրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարեւորը՝ ջուրը չաղաողովի



Գյուղը մեծ ընտանիք է, որտեղ հիմնականում հեռու կամ մոտիկ բարեկամներ են ապրում: Եթե արյունակից էլ չեն, ապա խնամակալ, քավոր-սանիկական կապը կա ու կա: Ու թվում է՝ պիտի ապրեն հաշտ, համերաշխ, բայց կենցաղային վեճերը անպակաս են լինում:

Զուլաքար գյուղում ամիսներ առաջ վիճեցին երկու եղբոր զավակները՝ Արմեն և Գայանե Մանուկյանները: Պապից ժառանգած հողատարածքը բաժանված էր չորս եղբայրների միջև, որոնց ընտանիքները իրենց բաժին հողամասում խոտ էին ցանում՝ եղջերավորներին արածեցնելու համար: Հողատարածքում գետնի տակից բխող սառնորակ աղբյուր կար, որն Արմենի մասնաբաժնում էր: Գայանեն սովորաբար իրենց եղջերավորներին այնտեղ էր տանում արածելու: Արմենն էլ ներսը-

տում էր. չէր ցանկանում, որ ջուրը պղտորվեր: Արմենը մի քանի անգամ զգուշացրեց Գայանեին, որ եղջերավորներին հնարավորինս հեռու կացրեր: Գայանեն էլ խոստանում էր, բայց խոստումը չէր կատարում: Այդ հարցի շուրջ էլ արյունակիցները վիճեցին: Արմենը հունից դուրս գալով խփեց հորեղբոր աղջկան:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Մարտունու բաժնի աշխատակիցները: Նյութեր նախապատրաստվեցին: Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, ջրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԳՅԱՆ

Որտեղի՞ց մարդկությանը բժշկական գիտելիքներ

Երկու հարց մշտապես հուզել է մարդկությանը՝ ինչպե՞ս բուժվել այս կամ այն հիվանդությունից և ինչպե՞ս կյանքը երկարացնել: Այսօր հիմնական շեշտը դրվում է քիմիական դեղերի օգնությամբ հիվանդությունների կանխարգելման և բուժման վրա: Չնայած ժամանակակից բժշկության առաջընթացին՝ ավանդական բժշկությունը գոյատևում է: Հարյուր տարի առաջ էլ մարդը հիվանդանում էր այն նույն հիվանդություններով, ինչ՞ հիմա: Եվ կան հիվանդություններ, որոնց բուժման համար «տատիկների» մեթոդներն ավելի արդյունավետ են: Այդ դեպքում ո՞ւմ են պետք այդքան դեղագործական ֆիրմաներն ու նրանց թողարկած թանկարժեք դեղորայքը:

տորիայում արհեստականորեն բարձր ինտելեկտ ունեցողների կողմից: Ըստ դրա՝ ստեղծողները պետք է նախատեսած լինեին տարբեր հիվանդություններից մարդու բուժման հնարավորությունները, որոնցով նա կարող է հիվանդանալ կյանքի ընթաց-



քում: Հնարավոր է, որ մարդուն օժտել են բազային գիտելիքներով, որից հետո նա պետք է ինքնուրույն գտներ բուժման միջոցներ, այս կամ այն բույսերից դեղամիջոցներ պատրաստեր: Եգիպտական փարավոնները, հին չինական կայսրերը, հին հունական կառավարիչները վստահեցնում էին, որ ծագում են աստվածներից: Այսպիսով, գիտելիքները մարդկությանը տրվել են դրսից, իսկ ահա երկար ապրելու ցանկությունը հետագայում է առաջացել, երբ միապետների փոխարինեցին սովորական տեղացիներ: Որոշ պատմաբաններ հենց սրա հետ են կապում հայտնի ազգերի անհետացումը: Ի սկզբանե եկվորների իշխող ազգը աստիճանաբար ձուլվեց երկրայինների հետ, ինչի հետևանքով էլ մի քանի հազար տարի անց առաջնային մաքուր ԴՆԹ-ից ոչինչ չի պահպանվել:

Ըստ պահպանված աղբյուրների, մասնավորապես՝ «Ռամայանա» էպոսում ներկայացվում է ավելի քան հազար տարի առաջ ապրած իշխանավորների զարմանահարաշ ունակությունների մասին: Բացի այդ, հիշա-

տակվում է ինչ-որ թռչող սարքերի մասին, որոնցով իշխանավորները կարողանում էին տեղաշարժվել, թռչել՝ ուր ցանկանում էին:

Քանի որ ամեն հաջորդ իշխանավորի մոտ նվազում էր աստվածային արյունը, համապատասխանաբար անհետանում էին նաև կարողությունները, ունակությունները և կյանքի տևողությունը: Հենց այս հանգամանքն էլ անհրաժեշտություն առաջացրեց երկարակեցության գաղտնիքի որոնումների համար. չէ՞ որ ոչ ոք չէր ցանկանում մեռնել և ձգտում էր իշխել ընդմիջ:

Հավերժ ապրել կամ, որքան հնարավոր է, երկար ապրել ցանկանում էին բոլոր կայսրերը, միապետներն ու փարավոնները: Այս ասպարեզում ամենաշատ գիտելիքները կուտակել էին հին եգիպտական քրմերը: Մինչ այսօր պահպանվում է Նեֆերտիտի թագուհու և նրա աստվածային գեղեցկության մասին լեգենդը: Նա իր գեղեցկությունն ու երիտասարդ տեսքը երկար տարիներ պահպանում էր որոշ կոսմետիկ միջոցների շնորհիվ, ի դեպ, երիտասարդացնող կոսմետիկան կոմպլեքսային էր: Նման արդյունավետությանը չի կարող պարծենալ ժամանակակից կոսմետիկ ֆիրմաներից և ոչ մեկը, որոնք ինչ-որ չափով կարողանում են պայքարել ծերունական նշանների դեմ, բայց պայքարել օրգանիզմի ներքին հյուսվածքների և օրգանների ծերացման դեմ ոչ մի կոսմետիկական ֆիրմա չի վիճակի չէ: Համաձայն լեգենդի՝ թագուհու մահից հետո նրա կոսմետիկ միջոցների ամբողջ փաթեթը թաղեցին բուրգերից մեկի պահուցում:

Հարունակելի Պատրաստեց Տաթև ՄեծՈՒՆՅՈ

Չվարձալի ամփոփագիր

Թռչունների զոհը

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ դաստակի վնասվածքով, մատների ջնջված վերքերով բուժօգնությամբ է դիմել 53-ամյա մի տղամարդ:

Մ ե կ ն ա ծ օ պ եր ա տ ի վ խ ու ն բը պարզել է, որ տղամարդն իրենց շենքի մոտ փորձել է քշել թռչուններին և պայթուցիչ է պայթեցրել, ինչի հետևանքով էլ վնասել է մատները: Նշանակվել է փորձաքննություն:

Քննչական փորձարարության մասին խոսք չկա:

Հարբած պատանդը

Երեկոյան իննին մոտ ոստիկանություն է զանգել 40-ամյա մի կին և հայտնել, թե ամուսնու ընկերը ռեստորանային համալիրում իրեն պատանդ է պահում:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ կինը գտնվում է ոչ թե ռեստորանային համալիրում, այլ ամուսնու ընկերոջ տանը, այն էլ՝ ոգելից խմիչք օգտագործած վիճակում: Իսկ եղելությունն այն է, որ կինը փորձել է հեռանալ, սակայն ամուսնու ընկերը թույլ չի տվել այդ վիճակում դուրս գալ փողոց:

Ստուգվել է երկուսի խնամքի պայմանները. չնայած առանց այդ էլ ամեն ինչ պարզ էր:

Հակամանկավարժական արարք

79-ամյա մի կնոջից հաղորդում է ստացվել, որ իրենց տան բակում, կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, որդու 47-ամյա կինը, որն, ի դեպ, ուսուցչուհի է, ապտակել է իրեն:

Կասկածներ կան, որ հին մեթոդներ կիրառող ուսուցչուհին նաև սկեսուրին անկյուն է կանգնեցրել:

Հ ա ն գ ա մ ա ն ք ն եր ու պարզվում են:

Կիսաբաց պատուհան՝ բուն իմաստով

25-ամյա մի կին հաղորդում է տվել, որ իր նախկին ամուսնու մայրը, առանց որևէ պատճառի, ծաղկի խառնուրթի մոտ քաշել է իր մագերից, ինչի հետևանքով գլուխը երկու-



երեք անգամ խփել է մեքենայի կիսաբաց պատուհանին: Շարունակելով սարսափ-հաղորդումը՝ հարսը պատմել է, որ ինքը փորձել է ձեռքով պահել գլուխը, սակայն հիմա էլ ձեռքն է խփել կիսաբաց պատուհանին:

Հաջորդ հանդիպումը գուցե լինի արդեն «Կիսաբաց պատուհանում»: Իսկ ոստիկաններն, այնուամենայնիվ, փորձում են հասկանալ՝ արդյո՞ք առանց պատճառի էր միջադեպը:

Սասաղացի բազմիմաստ մակկիշը

43-ամյա մի տղամարդ հաղորդում էր տվել, թե շատ օրեր առաջ տանը, վիճաբանության ժամանակ, կնոջ 67-ամյա մայրը երկու անգամ ձեռքով խփել է իր դեմքին պատճառելով ֆիզիկական ցավ:

Ոստիկանները հետաքրքրվել էին, թե ինչու է այսքան ուշ հայտնում այդ մասին, ինչին տղամարդը պատասխանել էր՝ հույս ունենալով, թե կիսաբաց պատուհանը:

Ու մինչ իրավապահները նախապատրաստում էին նյութեր և փորձում հասկանալ, թե ինչ կարելի է անել այս նույն իրավիճակում տղամարդուց ստացվում է նոր հաղորդում: Նա հայտնում էր, որ խոհանոցում կնոջ մայրը էլեկտրական մսաղացը խփել է գետնին և կոտրել՝ պատճառելով 220 հազար դրամի նյութական վնաս:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հոկտեմբերի 10-ից 17-ն ընկած ժամանակահատվածում ծեռնարկված օպերատիվ-փնտրողական և բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացվել է 24 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ ծեծի, 1-ը՝ ծեծի, բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու և գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 1-ը՝ մարդուն առևանգելու, 1-ը՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու փորձի, 1-ը՝ գույքն անգողչությանը ոչնչացնելու կամ վնասելու փորձի, 1-ը՝ գողության փորձի, 4-ը՝ խարդախության, 1-ը՝ իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 7 հետախուզվող: Արձանագրվել է 110 ճանապարհատրանսպորտային պատահար. 3 մարդ զոհվել է, 145-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 31 դեպք. 1 մարդ զոհվել է, 31-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի և նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության Ճանապարհներին

Հոկտեմբերի 13-ին Երևանի Սեբաստիայի փողոցի եւ Իսակովի պողոտայի խաչմերուկում իրար են բախվել «Միցուբիշի» եւ «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենաները: «Տոյոտա»-ի 28-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Հոկտեմբերի 14-ին Վանաձորի Տիգրան Մեծի պողոտայում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 29-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Հոկտեմբերի 14-ին Տաշիրի Երեւանյան փողոցում «ԳԱԶ-31029» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 21-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Հոկտեմբերի 14-ին Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոցում «Օպել» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված «ԲՄՎ X-5» մակնիշի ավտոմեքենայի: «Օպել»-ի 35-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Հոկտեմբերի 14-ին Կապանի Ա.Մանուկյան փողոցում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 7-ամյա տղայի եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

Հոկտեմբերի 14-ին Երեւանի Աշտարակի խճուղում իրար են բախվել «Տոյոտա» եւ «ՎԱԶ» մակնիշի ավտոմեքենաները: «ՎԱԶ»-ի 21-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Հոկտեմբերի 14-ին Երեւանի Արզումանյան փողոցում «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 7-ամյա աղջկա, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Հոկտեմբերի 15-ին Երեւանի Դավիթաշենի 4-րդ քաղաձառում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 36-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Հոկտեմբերի 15-ին Ալազյա-Արթիկ ճանապարհի 7-րդ կմ-ին իրար են բախվել «Օպել Ջաֆիրա» եւ «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենաները: Վարորդները եւ հինգ ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Հոկտեմբերի 15-ին Երեւանի Սեբաստիայի եւ Վեգերի փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Օպել» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաները: «Օպել»-ի 9 ամսական ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Հոկտեմբերի 15-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենան Արագածոտնի մարզի Միրաք գյուղի խաչմերուկում բախվել է «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենայի: «Օպել»-ի վարորդը դիմել է փախուստի, ինչի հետևանքով մեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի գոտուց եւ հայտնվել դաշտում, իսկ 55-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Հոկտեմբերի 15-ին Վանաձորի Բաղրամյան փողոցում «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 47-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Հոկտեմբերի 15-ին Արթիկ քաղաքի Բաղրամյան եւ Երկաթուղայինների փողոցների խաչմերուկում «ՎԱԶ-2110» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 14-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Հոկտեմբերի 15-ին Երեւան-Սեւան-Իջևան ճանապարհի 113-րդ կմ-ին «Պորչ Կայեն» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթևեկելի գոտուց եւ գլորվել ձորը: 35-ամյա վարորդը եւ 43-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, որտեղ վարորդը գիտակցության չգալով մահացել է:

1956 թ. մարտի 7-ն էր: Կեսօրին հացի խանութ իջնելիս տարօրինակ, ռիթմիկ գվ-վոց լսեցի պողոտայի կողմից: Գոլովինյան պողոտայի լայնքով երիտասարդների շարասյուն էր անցնում: Տանում էին Ստալինի հսկայական դիմանկարները, վրացերեն վանկարկում էին: «Փառք մեծ առաջնորդին»...

«Ուսանողներ են»՝ ասաց ինչ-որ մեկը: Անմիջապես հիշեցի, թե արդեն երկու օր ինչի մասին էր խոսում ողջ քաղաքը: Անձի պաշտամունքին վերաբերող վերջերս ստացված փակ նամակից հետո բուհերում ուսանողական խռովություններ էին սկսվել: Մարտի 5-ին՝ առաջնորդի մահվան տարելիցին, Թբիլիսիի համալսարանը բացահայտ մարտահրավեր նետեց իշխանություններին:

«Մենք Ստալինի քննադատությունն թույլ չենք տա» կարգախոսով ուսանողների ու դասախոսների բուռն հանրահավաք սկսվեց: Որքան էլ տարօրինակ է՝ իշխանությունները հանրահավաքը չցրեցին: Համալսարանին հետևեց Պոլիտեխնիկը: Դարձյալ բռնություններ չեղան: Ու գնա՛ց...

Վրացիներն ինքնասեր ժողովուրդ են: Բոլորը ծարավի են անկախության: Ավանդաբար իշխանություն չեն սիրում: Միշտ ու ցանկացած: Իսկ «մոսկովյանը»՝ առավել եւս: Սակայն «նամակը» բացեց ջրարգելակները: Հետո բոլորը անկեղծորեն կիսատվանեն. խնդիրը ոչ թե Ստալինն էր, այլ՝ խոցված ինքնասիրությունը: Մարտափելի հարվածը ազգային սրված արժանապատվությանը: Սուրբ էր, թե դեռ, միեւնույն է՝ Ստալինը յուրային էր, վրացի էր... Դժվար թե այդ հեղափոխական պոռթկման մեջ որեւէ մեկը հիշում էր, որ վերջին մարդահամարի ժամանակ «ազգությունը» այսուհաս Ստալինը գրել էր «ռուս»:

...Տուցարարների շարասյունը ճանապարհին ստվարանում էր. միանում էին անցորդներ, մշտապես Ռուսաբավելու պողոտայում կանգնած երիտասարդները: Պողոտան վերածվել էր փողոթուկ մարդկային գետի: Հասնելով Լենինի հրապարակ, որտեղ Իլյիչի թիկունքում ապահով կանգնել էր Քաղսովետի գործադիր կոմիտեի շենքը, շարասյունը կանգ առավ: Դիմանկարը հեծեցին Լենինին ու սկսեցին վանկարկել: «Վաշ Ստալին: Վաշ Քերիա» («Վեցցե Ստալինը: Կեցցե Քերիան»):

Մարտի 9-ը վճռորոշ դարձավ: Դպրոցներում ու բուհերում դասերն ինքնաբերաբար դադարեցին: Խլացուցիչների ճոթճոթաբող հարթահարելով՝ արտասահմանյան «ծայրը» հայտնում էր զանգվածային բողոքի ցույցերի մասին, որոնց պատճառը Ստալինի հիշատակի օրը չեղյալ հայտարարելն էր:

...Հենթարկվելով տնից դուրս չգալու՝ հորս պահանջին, գնացի Գոլովինյան պողոտա: Հանդիպեցի դպրոցականների: Նրանք հավաքվում էին առափնյակում, Ստալինի հուշարձանի մոտ, որտեղ հուզումների երկրորդ էպիկենտրոնն էր:

Ռուսաբավելու պողոտայում բեմատար հայտնվեց. թափքում «հեղափոխական զինվորներ ու նավաստիներ» էին՝ համապատասխան հանդերձանքով: Ռազմատենչ տեպուլ մտաբացած, կրծքերին խաչուփաչ փամփշտաժապավեններով նավաստիների մեջ գիրկընդխառն կանգնել էին դիմահարդարված Լենինն ու Ստալինը: «Իլյիչը» սեւ կեպին զլխին, ծանոթ շարժումով առաջ էր նետում ձեռքն ու գոռում «Փառք մեծ Ստալինին»: Բեղավոր ժառանգորդը պարտքի տակ չէր մնում: Բեմատարն անսպասելի արգելակեց: Առաջնորդները քիչ էր մնում գլորվեին: Կառնեցին իրարից: Սրտանց հայտնեցին: Ու նորից գրկախառնվեցին:

Բալազանը շարունակվում էր: ...Դիմապակիներին առջնորդի դիմանկարը կրող մեքենաների չչակների խելագար ոռնոց: Բղավոցներ՝ «Լենին-Ստալին»: Հետո՝ «Մառ Ցգեդուն»: Այդ օրերին Թբիլիսիում հյուրընկալվում էր մարշալ Ջուրջեն: Որոշել էին, որ մեծ Մաոյի զինակիցը պիտի պաշտպանի գեներալիսիմուսի արժանապատվությունը: Մի քանի հազար մարդուց բաղկացած շարասյունը շարժվեց դեպի Կրծանիս (կառավարության քաղաքաներձ նստավայրը, Քուռ գետի ափին):

Փողփողում էին դրոշմերը: Երգեր էին հնչում: Մարդկանց սրտերը լի էր վճռականությամբ:

Վերջապես հասան նստավայրի մոտ... Երկու վարկած կա. մեկով՝ պատուհանից նայելով հրապարակին, որը դրոշում էր «Մոսկվա-Պեկին» եւ «Չժու Ղեն» կոչերից, չինական փառաբանված ռազմիկը, որին համարյա մի գունդ զինվոր էր պահպանում, լավ վախեցել է: Գնդի հրամանատարը ցուցարարներին ասել է, որ մարշալի սիրտն է վատացել, ու ընդունելություն չի լինի, իսկ դիմումն ինքը կարող է անձամբ հանձնել: Հրապարակում երգը դադարել է, ցուցարարները վերադարձել են քաղաք...

ՎրաՑԱԿԱՆ ԸՆԴՎՁՈՒՄ ՀԱՆՈՒՄ... ՄՏԱՂԻՆԻ



Բայց կա նաեւ երկրորդ վարկածը. ամբողջ, համեմայնդեպս, պոկել է դարպասն ու ներխուժել բակ: Եվ միայն այնտեղ են կարողացել մարդկանց կանգնեցնել՝ հանդգնելով ու փոխզիջումների գնալով: Ու դիմումը մարշալին հանձնել են անձամբ ցուցարարները: Եվ իբր նույնիսկ Չժու Ղեն ելույթ է ունեցել...

...Թբիլիսին հսկայական շուկա էր հիշեցնում խայտաբղետ, բղավող, ալեկոծվող: Այսուհանդերձ հանրահավաքներ էին բռնկվում: Ամենաշիկացածը կենտրոնական հրապարակում էր: Դրոշներ, ցուցապատառներ՝ «Կորչի Խրուշչովը, Միկոյանը, Բուլգանինը», «Վերականգնել Ստալինին ու Բերիային», առաջնորդների դիմանկարներ: Չոմեր ու երգեր Ստալինին: Ճառեր ու հուշեր... Համարյա հնարավոր չէր հասկանալ, թե ինչ են ասում ելույթ ունեցողները: Հստակ ընկալվում էր միայն Ստալինի անունը: Բայց ցուցարարները գերզոգված վիճակում էին, եւ այդ էներգիան տարածվում էր նաեւ հրապարակից դուրս: Հռետորները բեմի վրա արագ փոխարինում էին իրար: Վեր էին թռչում, բղավում իրենց ասելիքն ու անհետանում:

Անհասկանալի է՝ ինչպես բեմի վրա հայտնվեցին Կիելի «պատվիրակները»: «Ամբողջ Ուկրաինան եռում է»՝ երդման պես հավաստիացնում էին նրանք: Ինչ-որ մեկը հեռագրերի տրցակն էր թափահարում՝ Լենինգրադից, Մերձբալթիկայից. այնտեղ նույնպես պատրաստ էին հանդես գալ ի պաշտպանություն Վրաստանի...

Հրապարակը շարունակվում էր եռալ: Պահանջները միանշանակ էին՝ Խրուշչովի պաշտոնաթողությունից մինչեւ նրա փոխարեն հավատարիմ ստալինական Մոլոտովին նշանակելը: Հետո ավելի արմատական դարձան՝ անմիջապես Թբիլիսի կանչել ու «մոսկովյան» Մժավանածի փոխարեն Վրաստանի ղեկավար նշանակել առաջնորդի որդուն ու ժառանգորդին՝ Վասիլի Ստալինին: Այդ որոշումները պետք էր անհապաղ հայտարարել համաշխարհային լրատվական գործակալություններին, փոխանցել ՄԱԿ, շտապ հեռագիր ուղարկել Մոլոտովին՝ շնորհավորել ծննդյան օրվա առթիվ եւ խնդրել, որ գլխավորի երկիրը:

Ժամը 10-ին ցուցարարները հրապարակից շարժվեցին դեպի Կապի տուն: ...Չինվորների շղթան կանգնած էր Կառավարության շենքի լայն սանդուղքի ներքեի աստիճաններին: Հրացանները պատրաստ էին կրակի, սվիններն ամրացված էին: Չինվորների նույնպիսի շղթա կար նաեւ Կապի տան մոտ: Իսկ ամբողջ սեղմում էր... Մի սպա խաչատած ձայնով համոզում

էր, որ ցրվենք: Սպառնում էր, որ կրակելու հրաման կտա: Բայց առաջին կրակոցը անբոխից հնչեց: Կրակեցին սպայի վրա: Չինվորներն անմիջապես թաքնվեցին այսուհանդերձ: Կրակ բացեցին: Ճիշդ լավեցին, ինչ-որ մեկն ընկավ: Հետո արդեն ինացվեց, որ կրակել են ոչ միայն բազմության վրա, այլեւ դիմացի «Թբիլիսի» հյուրանոցի ռեստորանի պատուհաններին:

Անսպասելի ինչ-որ տեղից գրահամեքենաներ հայտնվեցին: Չինվորներն ու տեխնիկան շարժվեցին դեպի առափնյակ՝ մարդկանց սեղմելով գետին ու փակելով նահանգի ճանապարհը: Ամբողջ հետ քաշվեց Կապի տնից, շրջվեց դեպի Կառավարության շենքը, ու ես ականա հայտնվեցի զինվորների շղթայի դիմաց: Շփոթված, կավճազույն դեմքով ջահել լեյտենանտը ինչ-որ բան էր գոռում: Ամբոխն ինձ մղում էր սարսափից չռված աչքերով զինվորի սվինի վրա: Նա հետ քաշվեց: Շուտով հետ քաշվեց նաեւ զինվորների շղթան: Այդ պահին չոր կրակահերթեր լավեցին: Բայց շղթայից չէին կրակում: Ինչ-որ մեկը գոռաց. «Տանիքից է»: Մարդիկ սկսեցին պառկել, եւ էլ ընկա ասֆալտին: Ես հրեցի կողքիս պառկածի կողք՝ գուցե փախչե՞ք: Նա նույնիսկ վրաս չնայեց: Բարձրացրի գլուխս ու տեսա, որ նրա մեջքին ընդարձակվում է շեղակի կարմիր բիծը: Հետո ուրիշ մարմիններ էլ նկատեցի: Խուճապ սկսվեց: Իրար տորոելով՝ մարդիկ փորձում էին փախչել, բայց ամբողջ չափազանց խիտ էր կանգնած: Իսկ վերտուն գտնվողների համար մենք հրաշալի թիրախ էինք: Նորից կրակահերթեր հնչեցին: Բղավոցներ, տնքոցներ...

Ինչ-որ ժեռք ինձ դուրս քաշեց այդ մահացից ու հրեց Գրիբոյեդովի դրամատիկական թատրոնի կամարի տակ... Մինչեւ հիմա չեմ հասկանում՝ հայրս ինձ ինչպես գտավ այդ խելագարված բազմության մեջ... Կեսգիշերից հետո փողոցից տարօրինակ դրոշմ լավեց: Եվ անմիջապես մեր հզոր «Նեվա» ռադիոընդունիչը անզլերեն առոզանությամբ խոխոսաց. «Տանկերը մտան Թբիլիսի: Փողոցները կրակի տակ են: Սպանվածները հաշվվում են հարյուրներով...»:

Ժամանակը հաճախ փոխում է գնահատականները: Եվ ցուցադրական կտրիճությունը հանկարծ տեղը գիջում է անվճռական մարդու վճռական արարքին: Վրաստանի այն ժամանակվա առաջնորդ Վասիլի Մժավանածին՝ բոլորի ատելի «Մոսկվայի դրածոն», դժվարությամբ էր խոսում վրացերեն: Նրան ծաղրում էին, երբ ռուսերեն, հետո ջարդված վրացերենով փորձում էր հանդարտեցնել խելագարված երիտասարդությանը: Իրոք արիություն էր պետք բազմության առջ դուրս գալու համար: Բայց ավելի՛ արարքի համար, որի մասին այն ժամանակ քչերը գիտեին. նա կտրականապես հրաժարվել էր կատարել հակասովետական հանրահավաքները ցանկացած գնով ճգնելու, ուսանողներին ձերբակալելու եւ դատելու՝ Կրեմլի հրամանը: Կուսակցությունը երբեք հրեշտակներ չեն ղեկավարել: Այդպիսին չէր նաեւ գեներալ-լեյտենանտ Մժավանածին: Նրա ու մյուսների հետ վրացիներն իրենց հաշիվներն ունեն: Բայց Մժավանածին չհատեց Ռուբիկոնը: Եվ այդ ժամանակ գործի անցան զինվորականները:

Մարտի 10-ի առավոտյան քաղաքը կուսականորեն մաքրու էր: Գիշերն անձրեւ էր եկել: Ռուսաբավելու պողոտայի այրուղը լվացվել էր: Չերթակավածներին բաց թողեցին: «Չարյա Վոստոկա» թերթը լույս տեսավ զանգվածային ելույթների ազգայնական բնույթի վերաբերյալ առաջնորդողով: Քաղաքում զինվորական պարեկում մտցվեց: Արգելվում էր խմբերով հավաքվել փողոցներում: Այդպես շարունակվեց մի քանի օր: Հետո երիտասարդությունը նորից սկսեց հավաքվել սովոր տեղերում՝ կարծիքներ էին փոխանակում, անփութորեն պատմում իրենց մարտական սխրանքների մասին... Խռովության էներգիան երկար էր պահպանվելու...

Վաղմիր Վերդիս
«Սովերշենն սեկրետն»

Օպերատիվ

Ընտանեկան բռնությունների բեման վերջին շրջանում առավել հաճախ է քննարկվում, կանանց նկատմամբ բռնությունների հարցերով քարոզչական, խորհրդատվական եւ այլ բնույթի տարբեր ծրագրեր են իրականացվում, սեմինարներ ու կլոր սեղաններ են կազմակերպվում, ինչը փաստում է, որ հիմնախնդիրը մեզանում առկա է:

Բռնություն հասկացությունը կամ դրա հոգեբանական ընկալումը խիստ անհատականացված է: Օրինակ, կախված անհատական համոզմունքներից, ազգային կամ ընտանեկան ավանդույթներից, կենցաղային կուլտուրայից՝ ամուսնու կուպիտ, բռի վարմունքը կարող է որպես բռնություն չընկալվել: Ամուսինը կարող է հայտնել կնոջը, ծեծել, վիրավորել, բայց դա եւ իր, եւ կնոջ կողմից չընկալվի որպես արտառոց երեւութ: Բայցեւայնպես, դա բռնություն է. ոստիկանություն դիմած կամ կանանց իրավունքների պաշտպանության «թեժ գիծ» ահազանգած բազմաթիվ կանայք դա են փաստում:

Հոգեբանների դիտարկմամբ՝ կնոջ նկատմամբ բռնությունների պատճառ կարող են լինել տղամարդու թերարժեքության, հոգեբանական տարբեր բարոյությունով տառապելու, ինքնահաստատված չլինելու հանգամանքները: Օրինակ, գործազրկության պատճառով ընտանիքի մատակարարի իրենց գործառույթից զրկված տղամարդիկ հաճախ համակվում են այդ անզորությունից բխող ագրեսիայով. աշխատող կնոջ կշտամբանքները տղամարդը փո-



Ընտանեկան բռնություններ

խաղաղում է ծեծով: Հոգեբաններն ասում են՝ տեղի է ունեցել հասարակական, այդ թվում՝ գենդերային դերակատարումների եւ կարգավիճակների տեղաշարժ, ինչը դրսևորվում է բռնություններով, արդյունքում՝ բազմաթիվ ընտանիքներում առկա հոգեբանական պատկերը՝ սթրեսներ, ագրեսիա, բռնություններ...

Հոգեբանները մի կարելու դիտարկում էլ ունեն. տղամարդկանց շրջանում բավական տարածված է այն դիրքորոշումը, թե կանանց մտավոր կարողությունները զիջում են տղամարդկանց կարողություններին: Սա հոգեբանները պատճա-

ռաբանում են տղամարդու անձնային ինքնահաստատման ուժգին ցանկության դրսևորմամբ: Տղամարդու էությանը բնորոշ այս կեցվածքը, թերեւս, կարող է նպաստել ամուր ընտանիքի կայացմանը, բայց միայն այն դեպքում, եթե այդ ցանկությունը դրսևորվում է հոգեբանորեն գրագետ, որոշակի սահմաններում:

Ընտանիքում ընդհանրապես անխուսափելի են տարակարծությունները, սուր հարցադրումները, կենցաղային տարաբնույթ հարցերի շուրջ վեճերն ու կոնֆլիկտները: Դրանցից արժանապատվորեն դուրս գալը ոչ թե բռնությունն է, անպատվությունը, այլ՝ հանդուրժողակամությունը, հարգանքն ու փոխզիջումը: Հատկապես տղամարդիկ պիտի գիտակցեն, որ հանդուրժողականությունն ամենեւին էլ չի շանակում դիրքերի զիջում. դա ընտանիքի ամրության ամենալուրջ կռվանն է:

Եվս մի կարելու հանգամանք. ընտանիքում վեճերն ու բռնությունները ծանր են անդրադառնում երեխաների հոգեբանության վրա. նրանք մեծանում են բարոյաթմբավորված, խաթարված հոգեբանությամբ: Մինչ կնոջ «դաս տալը» տղամարդն առաջնահերթ պիտի մտածի զավակի հոգեվիճակի մասին:

Իսկ վերջում, որպես ամփոփում, արժանագրեմք՝ «Կնոջ ուժը սեփական թուլությունից չվախենալու, իսկ տղամարդու թուլությունը՝ սեփական թուլությունից վախենալու մեջ է»:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ինքնամարման գործընթաց

Ոստիկանությունը հետեւողական ու անհանդուրժող է ոչ միայն հանցավորության դեմ պայքարում, այլև սեփական շարքերը հանցավոր տարրերից մաքրելու գործընթացում:

Ոստիկանության ԿԳՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական



կանի կողմից թմրամիջոց ձեռք բերելու փորձը: Ոստիկանության կապիտանը աշխատանքի ժամին ծառայողական մեքենայով գնացել էր պայմանավորված վայր, որ մի տղամարդուց թմրամիջոցներ էր քննարկելու:

Կանույան վանաձոր քաղաքի Տարոնի բաժին: Տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին փայտեղեղեղ փայտեղեղեղ մարիխուանայի զանգվածներ:

Դեպքի առթիվ ոստիկանությունում նախապատրաստված նյութերն ուղարկվել են հատուկ բնչական ծառայություն:

Հանգամանքները պարզվում են:

Ապօրինի ծառահատման դեպքեր են բացահայտվել



Ներկայացրել: Մեքենան տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Հոկտեմբերի 6-ին ստուգման է ենթարկվել Հրազդան քաղաքի մի բնակչի «Ձիլ» բեռնատարը, որը բարձրած էր մոտ 12 խմ փայտանյութով: Այս դեպքում եւ վարորդը բեռի օրինականությունը հավաստող որեւէ փաստաթուղթ չի ներկայացրել:

Նոյեմբերի 5-ին ստուգման է ենթարկվել Կողբ համայնքում ապրող մի տղամարդու «Մերսեդես»-ը, որը բարձրած էր մոտ 4 խմ փայտանյութով: Վարորդը բեռի օրինականությունը հավաստող որեւէ փաստաթուղթ չի ներկայացրել:

Հոկտեմբերի 5-ին եւ 6-ին ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ծառայողները բացահայտել են ապօրինի ծառահատման երկու դեպք:

Նոյեմբերի 5-ին ստուգման է ենթարկվել Կողբ համայնքում ապրող մի տղամարդու «Մերսեդես»-ը, որը բարձրած էր մոտ 4 խմ փայտանյութով: Վարորդը բեռի օրինականությունը հավաստող որեւէ փաստաթուղթ չի ներկայացրել:

Նշանակվել են մասնագիտական ստուգումներ: Դեպքերի առթիվ նախապատրաստվում են նյութեր: Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Չարաշահումներ Լոռու մարզում

Ոստիկանության ԿԳՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա, Լոռու մարզային վարչության եւ Սպիտակի բաժնի բրեւան հետախույզների հետ համատեղ միջոցառումների արդյունքում, Սպիտակում խոշոր չափերի չարաշահումներ են արձանագրվել:



Ների սանմաքման եւ Մեծ Պարնի համայնքի կարիքների համար աղբարկղերի մատակարարման ծառայություններ մատուցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրինությունը, 2018-2019 թթ. ընթացքում նախնական համաձայնության գալով հիշատակված համայնքներում գործող տարբեր տնտեսվարողների, ինչպես եւ մասնավոր անձանց հետ, առանց

պայմանագրերով նախատեսված աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու, կազմել են իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր հանդիսացող ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման կեղծ հաշիվ-վավերագրեր, կատարողական ակտեր, որոնք շրջանառության մեջ դնելով՝ ներկայացրել են պայմանագրերով սահմանված գումարները վճարելու լիազորությամբ օժտված իրավասու պաշտոնատար անձանց եւ խաբեության եղանակով փաստացի չկատարված աշխատանքների եւ չմատուցված ծառայությունների դիմաց ահիմն ստացել են, այս պահին բնութայնը հայտնի տվյալներով՝ մոտ 6 միլիոն 900 հազար դրամ:

Անտերույթ հանցագործության դեպքերի առթիվ հարուցվել է բրեւանական գործ:

Այգեպատում առեւանգվածը հայտնաբերվեց Գյումրիում

Հոկտեմբերի 5-ին ոստիկանության Արարատի բաժնում Այգեպատ գյուղի մի բնակիչ հաղորդում էր ԿԳՊ, որ իրենց փան մուրից առեւանգել են «ՎԱԶ-2106» մակնիշի իր մեքենան:

Նա բերման ենթարկվեց ոստիկանության Մուշի բաժին:



Ոստիկանության Արարատի բաժնի ծառայողները որոնողական աշխատանքներ սկսեցին, որոնց միացան նաև ոստիկանության Մուշի բաժնի քրեական հետախույզները, եւ համարել աշխատանքը հաջող օրն իսկ դրական արդյունք ԿԳՊ:

Ավելի ուշ ոստիկանները պարզեցին նաև, որ կասկածվողը Տաճար ճարտարապետի փողոցի բնակիչ, 19-ամյա ընկերոջ հետ է մեքենան առեւանգել, որը հոկտեմբերի 5-ից ոստիկանության Մուշի բաժնի կողմից,

գողություններ կարարելու մեղադրանքով, արդեն հետախույզվում էր:

Ներախույզվողին հայրնաբերելու ուղղությամբ որոնողական աշխատանքները շարունակվեցին: Ձեռնարկված ծավալուն օպերատիվ-հետախույզական միջոցառումների արդյունքում նա հայտնաբերվեց Գյումրիի Խորենացու փողոցի շենքերից մեկի նկուղում եւ բերման ենթարկվեց ոստիկանության Մուշի բաժին:

«ՎԱԶ-2106» մակնիշի մեքենան հայտնաբերվել է: Նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Առեւանգված մեքենայով վրարի էր ենթարկվել

Հոկտեմբերի 1-ին ոստիկանության Մարտունու բաժնում մի քաղաքացի հաղորդում էր տվել, որ անհայտ անձը Մարտունի քաղաքի երեսանյան փողոցից առեւանգել է «Նիսան Տիդա» մակնիշի իր մեքենան:



Ձեռնարկված որոնողական աշխատանքների արդյունքում ոստիկանները տեղեկություններ ստացան, որ մեքենան Մարտունի-Վարդենիս-Քարվաճառ ճանապարհին բախվել է Իջեւանի մի բնակչի «Տոյոտա Քեմրի» մակնիշի մեքենային: Ավելի ուշ, հենց վթարի վայրում, իրավապահները պարզեցին, որ «Նիսան»-

ը, ալկոհոլի ազդեցության տակ, առեւանգել է Մարտունու 29-ամյա մի բնակիչ, որը բուժհաստատություն տեղափոխվելուց եւ հետազոտվելուց հետո բերման է ենթարկվել ոստիկանության Մարտունու բաժնի:

Կատարվում է քննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Մարդկանց մեծամասնությունը առավել լավ ինքնազգացողություն է ունենում ամռան տաք եւ արեւոտ օրերին: Տարվա այս եղանակին մարդիկ ավելի շատ ժամանակ են անցկացնում մաքուր օդում, հաճույքով զբաղվում են սպորտով եւ ավելի քիչ սնունդ են օգտագործում: Սակայն որոշ մարդկանց համար եղանակի փոփոխությունը դառնում է իսկական տանջանք. նկատվում է վարքագծի փոփոխություն՝ երջանիկ եւ թուլացած վիճակից մինչեւ լարվածություն եւ դեպրեսիա: Նկատվում են նաեւ այնպիսի վիճակներ, երբ գրգռվածությունը հասնում է զագաթնակետին, աստիճանաբար սկսում է առաջ գալ կյանքի՝ անիմաստ լինելու զաղափարը, սակայն, երբ գալիս է գարունը՝ ամեն բան կրկին դառնում է հիասքանչ:

լայի» հորմոն անվանումը, արտադրվում է մթնոլորտի մեջ եւ չափազանց զգայուն է լույսի նկատմամբ: Ամառային կարճ գիշերների ընթացքում նրա քանակությունը նվազում է, փոխարենը՝ աշնան եւ ծմռան ամիսներին էապես աճում է, ինչի հետեւանքով էլ նկատվում են տրամադրության տատանումներ:

«Սեզոնային հոգեբանություն»



Սեզոնային ընկճախտի հիմնական նշաններն են՝

- քնի տեւողության աճ, ցերեկային քնկոտություն, առավոտյան արթնանալու հետ կապված դժվարություններ: Հաճախ նկատվում են քնից վաղ արթնացումներ, առանց կրկին քնելու հնարավորության,
- տրամադրության անկում, ինքնազնահատականի իջեցում, անելանելիության զգացում, հուսահատություն, լալկանություն, անհանգստություն, կյանքի նկատմամբ հետաքրքրության կորուստ, դրական հույզերի պակաս,
- անհանգստություն, դյուրագրգռություն, դյուրաբորբոքություն, ներքին լարում, սթրեսային իրավիճակների նկատմամբ դիմակայության նվազում,
- սեռական խնդիրներ (լիբիդոյի իջեցում եւ պոտենցիայի հետ կապված խնդիրներ),
- ֆիզիկական ախտանշաններ (հոդերի եւ որովայնի ցավեր, ուժերի անկում, մրսածությունից ծագող հիվանդությունների նկատմամբ դիմադրողականության իջեցում),

- սոցիալական խնդիրներ (դյուրագրգռություն, սոցիալական կոնտակտներից, մասնավորապես՝ հարազատների եւ ընկերների հետ շփումներից խուսափելու միտում):

Ելնելով այն հանգամանքից, որ սեզոնային ընկճախտն առաջանում է արեւային լույսի պակասից, տրամաբանական է մտածել, որ բուժման լավագույն միջոց է տաք երկրներ այցելելը: Ի դեպ, այս հիվանդությունից տառապող մարդկանց մեծամասնությունը հենց այդպես էլ վարվում է՝ հերթական արձակուրդը տեղափոխելով աշնանային մոայլ եւ անձրեւոտ եղանակներին: Սակայն բնական է, որ սա չի կարող դիտարկվել որպես խնդրի լուծում, այդ պատճառով էլ ներկայացնենք մի քանի խորհուրդ՝ սեզոնային ընկճախտը հաղթահարելու համար:

Առավոտյան ժամը 6-ից 8-ն ընկած ժամանակահատվածում ստացեք հնարավորինս ավելի շատ լույսի պաշար: Սա կարելի է ապահովել ինչպես առավոտ շուտ արթնանալու, այնպես էլ առավոտյան զբոսանքների միջոցով:

Չնայած մասնագետներն ընդունում են, որ չեն կատարվել հատուկ հետազոտություններ մարմնամարզության եւ սեզոնային ընկճախտի կապը բացահայտելու համար, այնուամենայնիվ, վարժությունները երբեք չեն վնասի: Դրանք նպաստում են մարդու մեջ կայունության զգացումի ծեւավորմանը եւ սեզոնային ընկճախտի կանխարգելման հիանալի միջոց են:

Այլոհոլի եւ կոֆեինի կիրառումը սեզոնային ընկճախտի դեմ մղվող պայքարի չափազանց տարածված միջոց է: Սակայն, չնայած նրան, որ կոֆեինը կարող է առաջացնել տրամադրության ժամանակավոր վերելք, այն կարող է հանգեցնել նաեւ անհանգստության, ստամոքսաղիքային եւ մկանային լարումների առաջացմանը: Իսկ այլոհոլի չարաշահումը կարող է հետագայում հանգեցնել ընկճախտի խորացման:

Չափազանց կարեւոր է ընել եւ արթնանալ նույն ժամերին. սա թույլ է տալիս հավասարակշռել օրգանիզմի կենսաբանական ժամերը:

Հայտնաբերվել է ինքնաշեն հրազեն



Ոստիկանության իրազդանի բաժնում ձեռնարկված միջոցառումների արդյունքում տվյալներ էին ձեռք բերվել, որ նախկինում երկու անգամ դատապարտված,

իրազդանի բնակիչ, 42-ամյա տղամարդը տանն ապօրինի պահում է ինքնաշեն հրազեն, իսկ կից օժանդակ շինությունում թմրամիջոց է պահում եւ օգտագործում:

Ոստիկանության իրազդանի բաժնում հարուցվեց քրեական գործ: Դատարանի որոշման հիման վրա խուզարկվեց հիշյալ տունն ու օժանդակ շինությունը: Արդյունքում՝ տան նկուղում հայտնաբերվեցին 7,62 մմ տրամաչափի փամփուշտ կրակելու ինքնաշեն հրազեն, «S09» տեսակի փամփուշտ կրակելու ինքնաշեն սարք, 5,45 մմ տրամաչափի՝ 9, 7,62 մմ տրամա-

չափի 16 եւ որսորդական հրացանի 10 փամփուշտներ: Հայտնաբերվեցին նաեւ որսորդական հրացանի փամփուշտի պարկուճ, «S09»-ի 9 փամփուշտ, «Սոկուլ» գրառմամբ վառող եւ որսորդական հրացանի փամփուշտներ պատրաստելու պարագաներ:

Տանտերը ոստիկաններին հայտնել է, որ հայտնաբերվածն իրենն է. փամփուշտները երեք տարի առաջ է բերել Արցախից, իսկ ինքնաշեն հրազենն ու սարքը նկուղում է պատրաստել:

Հայտնաբերվածն առգրավվել է: Նշանակվել է դատաձգաբանական փորձաքննություն:

Երիկ ԱՍՎԱՍՍՐՅԱՆ

«Տարադրամային» բացահայտում

«Դոլար առնեմ դրամով». 90-ական թվականներից հայտնի արտահայտությունն այսօր արդեն անցյալում է: Արարածույթի փոխանակումն իրականացվում է բանկերում կամ համապատասխան լիցենզիա ունեցող փարադրամի կետերում: Օրենքն է այդպես պահանջում:



թյան դեմ ուղղված հանցագործությունների թվին:

Նոյեմբերի 7-ին ոստիկանության

Տավուշի բաժնի ծառայողների բացահայտումն այս համալսմանը էր: Քրեական հետախույզները, օպերատիվ փնտնություններն իրացնելով, բաժին հրավիրեցին Բերդ քաղաքի 54-ամյա մի բնակչի:

Պարզվեց, որ նա օգոստոս ամսից մինչ օրս առանց լիցենզիայի զբաղվել է արարածույթի առուվաճառքի իրականացմամբ՝ դոլար է փոխանակել, ռուբլին վերածել է դրամի եւ հակառակը:

Փաստի առթիվ ոստիկանության Տավուշի բաժնում նախապարտադրվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Հայտնաբերվել են հետախույզվողներ



Հոկտեմբերի 11-ին ոստիկանության ՔՅԳՎ ծառայողները Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռով Հայաստան են տեղափոխել Շենգավիթի Մանանդյան փողոցի 23-ամյա բնակչի, որը 2017 թ. հունիսից Արցախի Հանրապետության իրավապահների կողմից հետախույզվում էր քրեական օրենսգրքի 238-րդ եւ 235-րդ հոդվածների մեղադրանքով:

Հոկտեմբերի 11-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել Տաջիկստանի 32-ամյա քաղաքացի, որը հետախույզվում էր Տաջիկստանի իրավապահ մարմինների կողմից խարդախության մեղադրանքով:

Հոկտեմբերի 12-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ՔՅԲ ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախույզական միջոցառումների շնորհիվ Ստամբուլ-Երեւան չվերթի ժամանումից հետո գծային բաժին բերման է ենթարկվել Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Շահնամ Ա.-ն, որը հետախույզվում է ԻԻԻ Ինտերպոլի կողմից խարդախության մեղադրանքով:

Հոկտեմբերի 12-ին ոստիկանության ՔՅԳՎ եւ «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ծառայողները Երեւանի Արգիշտիի փողոցից բերման են ենթարկել ՌԴ 28-ամյա քաղաքացի Ալեքսանդր Գ.-ին, որը 2015 թ. դեկտեմբերից ՌԴ Կոմի Հանրապետության իրավապահների կողմից հետախույզվում էր ՌԴ քրեական օրենսգրքի 159 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:


Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզների, ՃՈ Երեւանի հաշվառման-քննական բաժնի, մաքսատան հաշվառման խմբի ծառայողների եւ Շենգավիթի բաժնի վետերանների համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում հոկտեմբերի 12-ին Արշակունյաց պողոտայից ոստիկանության Շենգավիթի բաժնի բերման է ենթարկվել 39-ամյա Բագրատ Բ.-ն, որը ՌԴ քրեական օրենսգրքի 291 հոդվածի (կաշառք տալը) մեղադրանքով հետախույզվում էր ՌԴ Ստավրոպոլի երկրամասի իրավապահների կողմից:

Հոկտեմբերի 13-ին ոստիկանության Լոյենբերյանի բաժնի, Երեւան քաղաքի ՊՊԾ գնդի 1-ին գումարտակի 11-րդ վաշտի եւ Երեւանում բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների արդյունքում Երեւան քաղաքի Ազաթանգեղոսի փողոցից ոստիկանության Լոյենբերյանի բաժնի բերման է ենթարկվել 27-ամյա Նիկոլայ Ա.-ն, որը հետախույզվում էր Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից՝ ԱԶ քրեական օրենսգրքի 184 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 5-րդ սպայական վաշտի եւ ոստիկանության Թումանյանի բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախույզական միջոցառումների շնորհիվ հոկտեմբերի 13-ին Սղարթ-Արեւածագ գյուղերի խաչմերուկից բերման է ենթարկվել 24-ամյա Սասուն Վ.-ն, որը ոստիկանության Թումանյանի բաժնի կողմից հետախույզվում էր քրեական օրենսգրքի 112 հոդվածի (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ իրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Վերդի, օպերա	Կրթա-րային տու.Ֆ Գետ, ՈՂ	Պարոն-յան, հերոս Դրոզ աշուղ	Շերեփ	«Չոմո Ֆա-բեր» Խորշ, Լապ-տենների ծով	Արժեք-վոր շի-նանյուք	... Երմակ Չի, ջորի	Աստղ, Կարիճ համաս-տեղուք.
Նավա-հան-գիստ, Չի-լի			ճապոն. դերասան-ների գեր-դաստան				Գետ, Դրիմ
Բյու-զանդ. հայազգի կայսրեր			Թանձր ծաշ			Ռուսք	
			Հնդկացու նավակ	Հողը մշա-կելու հին գործիք	Բարձրա-կարգ օդաչու	Ֆերենց ...	Խնձորի տեսակ
Ալեն ... Ատոմ Յարճան-յան	Ռազմա-կան մաս-նագիտու-թյուն	Պատրի-սիա ... Հունգար երգահան		Հոլանդ. փիլիսոփա Ֆրանս. քաղաք	Հայկա-կան տառ	Բրնձի օղի	Աբլետիկ գործիք երկիր, Գար. Ամերիկա
			Հոլանդ. փիլիսոփա Ֆրանս. քաղաք				Սեյվալ, Ֆինվալ «Մի ամ-լիկ ...»
				Մարդու հասակ	Պարսիկ կուսակալ	Հայ ազն-վակա-նուք. վեր-նախավը	
		Ամերիկ. ֆիզիկոս			Փոթորիկ Հոգեու-րական		
	Ամանի բռնակ Գուստավ ...		Կիսակա-պիկ Գավառ, Ու-տիք նահ.	Գյուղ, Թալին Անապատ			Ֆրանս. երգահան Վայր
Ուրար-տուի ար-քա			...ի խո-զանակ կերակուր		Կիսա-թանկար-ծեք քար		Ռուս գորավար Կլոդ ... Կապուր
			Ռուս ճարտա-րապետ			Ստանիս-լավ ...	Անգլիացի լորդ, փի-լիսոփա
Անկողնա-յին ծած-կոց ... Անջելես		Նվենի	... Թեբեյան Չին փիլի-սոփ. հաս-կաց.		Բառի մաս Բնակարա-նի բաժին	Ավետա-րանիչ Թառ	
				Մ.թ.ա. 4-րդ դ. հույն նկարիչ Արժիվ			Իսպան. երկար դանակ
Հսկիչ	Մանկա-վարժ	... Ժերան-յան			... Մելիքյան Քաշ		Մարգա-կան գենք
					ժան ... Հրաբխ. զանգված	... Դոլու-խանյան	Դաշտի փոքր հյուղ
				Բաթու... Անահ		Սալվա-դոր ... Ակնթարթ	Խորհրդ. մանկա-գիր
						Ռուս կայսր	
				Սուրբ ... կղզի		Մրցավար	
					Անասու-նների խումբ	Լուսատու սարք	Իտալա-կան դրամ



Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչու-թյունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվ-տանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակու-թյան վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամե-մատ մատչելի են:

Մինչև 120 ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառա-նոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվ-ճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամ-սական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունի համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կեսիկ - Վճռա-կան եք տրա-մադրված, սիրով ըն-դունում եք ճակա-տագրի մարտահրավեր-ները:

Ծնուկ - Հատկապես դժվար կլինի նրանց համար, ովքեր սու-վոր են աշխատել հուսա-լի դաշնակիցների հետ:

Իերկվորյակ - Փոր-ձեք վերահսկել հու-զական վիճակը: Եթե տր-վեք զգացմունքների, կարող եք հրաժարվել սե-փական նպատակներից:

Խեցգետին - Պատրաստ եղեք պայքարի: Պետք կա այն, ինչ սովորել եք նախ-կինում, իսկ ուրիշի փոր-ձը հաճախ անօգուտ է:

Առյուծ - Կարելի է ապավինել ինտուի-ցիային: Դրա խորհուրդ-ները ժամանակին եւ ճշգ-

Մարտահրավեր
18.10 - 24.10

Աղեղնավոր - Շատ բան կա-րող է անսպասելի լավ ստացվել, բայց սխալ կլինի մտածել, որ դա եր-կար կշարունակվի:

Այծեղջյուր - Չեզ-ուղեկցում է հաջո-ղությունը: Կարելի է վե-րականգնել հին գործնա-կան հարաբերություն-ներն ու վաղեմի ծանո-թությունները:

Ջրիս - Արդյունա-վետ շաքաթ է: Ավե-լի լավ է չչտապել: Հան-գիստ մտածեք ամեն քայլն անելուց առաջ:

Ճուկ - Չնայած դժ-վարությունների պահպանում եք լավա-տեսությունը՝ չհրաժար-վելով սեփական գաղա-փարներից:

Փորձեք լուծել

Խնդիր N1

Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2

Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Պատրաստեց Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ, համարի սկզբնական պատասխանները

Պ	Տ	Ժ	Մ	Ս	Ո	Լ	Յ	Մ	Յ
Պ	Ե	Լ	Բ	Ն	Ա	Յ	Ա	Բ	Ե
Մ	Ա	Ր	Ա	Գ	Ն	Ա	Պ	Ա	Ն
Թ	Ո	Ս	Ս	Յ	Ո	Ր	Ս	Կ	Մ
Թ	Ն	Ե	Գ	Ա	Լ	Ա	Վ	Ե	Ս
Թ	Ա	Ն	Լ	Ս	Ա	Ր	Ս	Թ	Ն
Ս	Ե	Ն	Թ	Ա	Վ	Ա	Ր	Ս	Թ
Ն	Ո	Գ	Ա	Ա	Ր	Բ	Ե	Ե	Վ
Պ	Ե	Ն	Լ	Ո	Պ	Ա	Ն	Թ	Վ
Ս	Ի	Ր	Տ	Ե	Ս	Ե	Ն	Լ	Ս
Ս	Ա	Ս	Ո	Ս	Ա	Ր	Ս	Տ	Գ
Տ	Յ	Ս	Ո	Լ	Ո	Ե	Ս	Վ	Գ
Տ	Յ	Ս	Ո	Լ	Ո	Գ	Ի	Լ	Վ
Ս	Տ	Ր	Ա	Տ	Գ	Ո	Ս	Ա	Թ
Ն	Ա	Ղ	Փ	Ա	Լ	Ա	Ս	Ե	Ս
Վ	Ի	Հ	Կ	Ո	Լ	Ն	Ք	Ա	Ո
Լ	Ա	Շ	Կ	Վ	Ս	Դ	Ա	Ն	Ղ

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աբաբեկյան: Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 17.10.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950: Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հեռակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը՝ «02»-ին պարտադիր է: Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատու պատվիրատուն է: